

ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**ՀԱՄԱՐՈՅ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ.**

( Եաբունակութիւն լւրջ ) :

ԺԴ.

Տէսու.

ԽՃԿՕՆԻց (ԲԷՇՔԻԼԻՍԱ) ԴԵՎԻ ՀԱՐԱՎ ԱՐԱԵԼՔ ՀԱՄԱՆՈՆ գետի վերայ, մօտ երեք վերստ հեռաւորութեամբ գտնվում է Տիկոռ գիւղը, որի բնակիչներից մի մասը հայ, մի մասը մահմետական են: Տիկոռը նախիճանի գաւառաւակի (Տիճն Արշարունիք) կենդրունն է, այդ տեղ է գաւառական վարչութիւնը:

Տիկոռում գտնվում է Ս. Երրորդութիւն կոչվող հին փառաւոր, հոյակապ և իւր տեսակում ինքնուրոյն ճարտարապետութեամբ վանքը:

Վագքը ճաղաղ դիրք և տեսք ունի. բացի արևելեան կողմից ունեցել է սիւնազարդ սրահ, մների խոյտկները և կամարների գարձուածների հետքերը դեռ նկատվում են: Վանքը շատ օտարակի ունեցել է ասակճաններ, այժմ միայն հիւսիսային աղմին է բաց:

Այս փառաւոր տաճարի հարաւային որմը և տանիքը քայլայուած են: Եկեղեցու միջին հարաւային կողմի մները նստած են կամսորներն էլ խախուած, այս իսկ պատճառով ահա քանի տարի է դադարած է ժամերգութիւնը: Եկրակի ամենահին եկեղեղին է այս եկեղեղւոյս շինողն է Սահակ կամսարական: շինուած է Յովհան կաթուղիկոսի օրուն: Հ. Ալիշան համարում է Սահակ կամսարականը ներսէհ և Հրահատ կամսարականների եղբայր: Եթէ յիրաւի, Հ. Ալիշանի ենթադրութիւնը ուղիղ է, այն ժամանակ եկեղեցու շինութիւնը հասնում է Երդ դարին:

Տիկուը յիշվում է 724 թուին, երբ Վաղարշապատի ժողովում, ըստ ասելոյ Յովհաննէս սարկաւագի, Յովհան Օձնեցին Տիկուեցի Յովհաննէսին ի կրօնս մնողեալ լինելոյն համար մերժում է: (Նիրակ եր. 185). Տիկուի Ս. Երրորդութիւն վանքը համարեա ծածկուած է արձանագրութիւններով, որ ապացոյց է նորա հոչակին և ճոխութեանը:

Տիկուի եկեղեցին կործանմանից ազատելու համար, և այդ ամենահին տաճարը իւր յատուկ ճարտարապետութեամբ որպէս նմուշ պահպանելու համար հոգս և խնամք պէտք են: Վանքիս յատկացրած է 286 գեսիատին հող, որից 100 գեսիատինը վարելահսղ է, 160 գեսիատինը՝ արօտատեղի, իսկ 26 գեսիատինը՝ անյարմոր: 1888 թուի աշնանից հողը յանձնուեց հսգեռոր իշխանութեան: Հողը կոչվում է «Հասան—ջան» և ոյժմ կապալաւ տուած է:

#### Ժ.Դ.

Ս. Սուեկոնոսէ վան+ Ա. Քուրէին+.

Խծկօնից վանքից գէպի արեւմուտք Տիկուի գետի աջ ափին բարձրաւանդակ լեռնագատակի վերայ, Խծկօնից մօտ մի վերստ հեռաւորութեամբ գտնվում է Ավարակ հայաբնակ գիւղը, որ ըստ աւանդութեան՝ Անեցւոց ամարանցն է եղել: Գիւղի հարաւային կողմը գտնվում է միջակ մեծութեամբ գմբէթուոր Ս. Ստեփաննոս եկեղեցին: Շինութեան թուականը յայտնի չէ, սակայն փրկչի հաղարամեակից առաջ պէտք է շինուած լինի, որովհետեւ արդէն Հայոց ՆԾՅ (1006) թուականը կրող տրձանագրութիւն ունի: Անպատակաւորների երկիւղից՝ եկեղեցու լուսամուտները վակուած լինելուն համար եկեղեցու մէջը խոնաւ և մւայլ է. գուռը գէպի հիւսիս է բացվում, մի այլ եկեղեցւոյ աւերակի հանգէպ, որի միայն ստորին մասերն են մնում: Եկեղեցու արեւմտեան կողմն է գիւղի ընդարձակ և շատ ընդարձակ ու խիտ գերեզմանոցը: Ափսոս ժամանակ չեղաւ հնագոյն գերեզմանների մի քանիսի թիւը վեր առնել, և

այսպէս աստիճանաբար մինչև մեր ժամանակը, որպէս զի հնար լիներ իմանալ թէ երբ և իցէ գիւղն ամայացել է, և որ դարից սկսեալ կամ որ դարու գերեզմաններ կան:

պահու և այլ բարեկարգությունները առաջանձանական էին այս տարբերակում:

५८०

**ՄՐԻ** (Լ-Ր-Ի-Ր-Լ).

Ագարակից դառնալով դէպի ծիկոռ, և ծիկոռի գետը անցնելով՝ հինգ ժամու չափ ճանապարհ գնալուց յետոյ, թողնելով Լալոյի—Մաւրակ (յանուն Սօրիկ կայսեր շինած և Շիրակայ Մաւրակից ջոկուելու համար Լալոյի) կոչուած գիւղը, որի հին մարտկոցը այժմ եկեղեցի է փոխուած, մենք հասանք Մընու անապատը:

Մը Ենք գտնվում է Ախուրեան և Տիկոսի գետերի միջև հա-  
րաւ արևմուտքում մի սրածայր վերջացող եռանկիւնակի վե-  
րայ. որ կազմում են երկու գետերը խոր ձորի մէջ միմիանց  
հետ միանալով:

Մըէն եթէ քաղաք չէր, բայց մեծ քաղաքագիւղ եղել է. որի ապացոյց են այգիների ցարդ. մնացած յանկերը, տների որմերը. սրբատաշ քարով շինած մատուռներն ու ապարանքները, և որ ամենից նշանաւորն է՝ Մըէնի հոյակապ, փառաւոր և վայել-չանիստ կաթուղիկէն, Անւոյ կաթուղիկէից քիչ փոքր: Ինչպէս Մըէն, նոյնպէս և Տիկոռի Ս. Երրորդութիւն տաճարների արեւ-ելեան կողմից խօրանի տեղը քիչ դուրս ընկած է. այսպէս էր և էջմիածնի տաճարինը: Մինչդեռ Բագրատունեաց ժամանակի եկեղեցիք այդ դուրս ընկածը չտանին, այլ ուղղագիծ են:

Մըէնի կաթուղիկէն հեռուից բաւական նոր է երեսում. զմբէ-թը կանգունէ. շինութիւնը ըրոխտ, բայց երբ մօտենում ես տես-նում ես հնութեանց երկու թշնամիները՝ ժամանակն իւր ար-հաւիրքներով և մորդը իւր կործանիչ ձեռքով բաւական վլ-նաս են հասցըրել. Ամայութեան ժամանակ փառաւոր կաթու-ղիկէն ոչխարի փառախ է դարձած եղել. իսկ ոչխարի քակորը

մաքրելու համար գիւրագին միջոցն է եղել այրելը և այսպիսով եկեղեցու յատակի քարերը և որմերը միջի կողմից երկու արշազափ թրծուած են, ի վնաս քարի և կրի ամրութեան, դրոի կողմից ևս քարեր պոկուած են, Երեխ սրանից հիմքը թուլանալով ամբողջ հիւսիսային որմը արեւմոքից արեւելք կամարներից անցնելով պատռուած և բաժանուած է շենքի մարմնից: Եկեղեցին արտաքուստ՝ ցաւալի և արգահասելի է իսկ ներքուստ՝ պատկառելի և աչարկօն: Բեմի տակը գարան է եղել կամարակապ և այժմ ճակատը փուլ եկած լինելով դարանը բացուած է:

Մրէնը այժմ իսկապէս անապատ է և գողագարան, որով հետեւ գիւրօրայք բաւական հեռի են: Զմեռն միայն սակաւ կենդանութիւն է լինում, որովհետեւ շրջակայ գիւղօրայք իրանց ոչխորները բերում են այդ տեղ որպէս ձմերանոց արածելու: Մրէնը Շիրակի բարձրաւանդակի ամենացած տեղն է և ծայրը, հետեւքար հազիւ Աշտարակի բարձրութիւնն ունենալով բաւական տաք կլիմայ ունի, որ յարմար է այգեգործութեան և այն ամեն սերմնացանութեան, որ կարող է Արարատեան դաշտը հասցնել: Ժամանակին Մրէնը ունեցել է ջուր, որ հոսել է ծիկուոյ գետակից: բայց այժմ ի հարկ է խափանուած է: Մրէնը կարող է շենանալ միայն այնպիսի ժողովրդի ձեռքով, որ սովոր է արուեստական սուսպամբ իւր ցանքից արդիւնք սպասել: Սորանից մի քանի տարի առաջ պարսկաստանի գաղթական Բեղաքըւեցիք փորձ արել են, բայց իրանցից անկախ պատճառով գլուխ չեն հանել: Նոքա որոնք սովոր են իրանց ցանքը ցանելուց յետոյ Աստուծոյ կամքին յանձնել մինչեւ հնձելը, նոքա չեն կարող Մրէնից օգտուիլ, որովհետեւ նախ որ, ինչպէս ասացի՝ կլիման բաւական չոր և տաք է: Երկրորդ՝ հողը կրային լինելով խոնաւութիւն չէ պահում, հետեւքար անջրդի ցանք այնտեղ չի կարող լինել:

Մրէն մեր պատմութեան մէջ յայտնի է և դարից: Երբ այդ տեղի Խորէն քահանան, Ղեռնդ երէցի և Վաղարշապատու Երկրիա քահանայի հետ գնաց Վարդանին համոզելու, որ նա

ազգը ճգնաժամի մէջ չըթողնէ ու գնայ Յունաստան, այն ժամանակ, երբ Վարդան կամենում էր խոյս տալ Յունաստան՝ Պարսից հալածանքից պրծնելու համար:

Մրէնի կաթուղիկէն շինել է Դաւիթ Սահառունին եօթներորդ դարում Փրկչի 613 թուին. որով Տիկուից յետոյ հին եկեղեցին Շիրակայ է Մրէնի կաթուղիկէն։ Մրէնի կաթուղիկէն զանազան ժամանակներում նորոգութեան է ենթարկուել ինչպէս երեւում է բազմաթիւ արձանագրութիւններից։ Վերջին արձանագրութիւնը վերաբերում է Հայոց ԶԵՒ (1295) թուին։

Մրէնի աւերակների մէջ նկատվում է մի ապարանքի աւերակ. ժողովուրդը աւանդութեամբ անուանում է այդ աւերակը Ղարաքեահի սարայ, թերեւս Սահառունիք Ղարաքեահեայ գարձած լինին ժողովրդական զրոյցներում։

Հոգեոր իշխանութիւնը բաւական ժամանակ է որ ձգտում էր Մրէնի կաթուղիկէն մարդաբնակ դարձնել իբրև մի վանք, բայց այդ յայսից այժմ վրիպեալ պէտք է համարուիլ. շնորհիւ Ալէքսանդրօպոլից ոմն տիրացու Յակովի, որ տարիներով հսկեոր իշխանութեան հաւատացրել էր թէ ինքն իբրև Մրէնի միաբան շէնցրել է վանքը, բայց երբ եկած էր օրը երբ պիտի որոշուեր Մրէնի բաղդը նորան ևս հող յատկացնելու նախապարասսութեամբ, այդ օրը յայտնուեց որ Մրէնը նոյն աւերակն է ինչ որ դարեր առաջ և տիրացու Յակովը, աչքի առաջ ունենալով որ հոգեոր իշխանութիւնը չէ կարող հետամուտ լինել և ստուգել իւր ասածները, Մրէնի համարեա անմատչելութեան պատճառով, խաբել է հոգեոր իշխանութեանը, միայն հոգեոր կոչումն ստանալու յուսով։

## ՃԶ.

Բագրեան.

Բագարան գիւղը գտնվում է Ախուրեանի աջ ափին լեռնակերով շրջապատած մի փոսորակի մէջ, և գտնվում է Մրէնից

գէպի հարաւ արևմուտք երկու ժամու հեռաւորութեամբ։ Ճանապարհը Մրէնից գէպի Բագարան Ախուրեանի ափով չափազանց գժուարտգնաց է և միայն հետի կարելի է գնալ։ բայց տեսարանը հիանալի է։ Անդնդախոր ձորի միջով հանդարտիկ հոսում է Ախուրեանը երկու կողմից սէզով և եղեգնով եղերաւորուած։ ձորը մանաւանդ աջ կողմից ուղղաձիգ ահագին բարձրութեամբ պարսպած է ժայռերով, որոնք տեղ գլանածե վերեից վայր են իջած և սիրուն տեսարան են ներկայացնում։ Հայաստանը լիոնուտ երկիր լինելով՝ ձորեր անհամար են, բայց Բագարանի ձորը անհման է։ Բագարանը գտնվում է փոքր ինչ ընդարձակ գոգաւոր տարածութեան վերայ հայաքնակ գիւղը, և տեղւոյն հայերը հռչակ ստացած են որպէս քաջափիրու մարդիկ։ Բագարանը Բագրատունեաց և նոցանից առաջ՝ կամսարակունների ոստանն էր, հետեւաբար և ամեն քայլափիսի վերայ հնութեան հետք կարելի է նշմարել։ Գիւղից գէպի հիւսիս բարձրանում է լեռան մի ոստ բաւական բարձրութեամբ։ այդ ոստը, որ նման է Կարսի միջնաբերդին՝ եղել է Բագարանի միջնաբերդը։ և այդ միջնաբերդի արևելեան ոստը անկիւնի վերայ շինուած է Բագարանի հռչակաւոր Ս. Գէորգ մատոււը, որ համբաւաւոր ուխտատեղի է։ Հին Բագարանը եղել է միջնաբերդի հարաւային ստորոտում գտնվող փոսորակի մէջ, բայց այդ տեղը անյարմար լինելով բնակութեան համար, որովհետեւ չորս կողմից թէ անձրեւաջրերը և թէ ձիւնի հայլուաճքը այդ տեղ է լճանալիս եղել, ամայացել է։ բարբարսութեանց ժամանակ երբ ժողովուրդը սակաւանում է, այդ սակաւաթիւ ժողովուրդը պատոպարլում է միջնաբերդի փոքրիկ տարածութեան վերայ։ այժմ թողնելով միջնաբերդը, և հին Բագարանի տեղը գետափի զառի վայրի վերայ են շինել տները, բայց չունենալով եկեղեցի, գարձեալ Ս. Գէորգի մատոււի մէջ են կատարում ժամերգութիւնը։ Յայտնի չէ թէ որ ժամանակ է շինուած այս մատոււը, բայց հաւանական է որ Ժ-րդ գարու գործն է։ մատոււի քիւը մարմար է եղել, որ ցայսօր էլ կայ։

Բագարանի գերեզմանոցը գիւղի մէջ է և գերեզմանոցի և գիւղի մէջ կայ եկեղեցու աւերակ, որից միայն մի պատճ է մնում, բայց այդ պատճ էլ ցոյց է տալիս թէ եկեղեցին բաւական ճարտարաշէն և նուրբ մի շինուածք է եղել:

Գիւղի հանդէպ Ախուրեանի ձախ ավին փոքրիկ բարձրաւանդակի վերայ գտնվում է մի սիրուն մատուռ Ա. Շուշան անունով, դարձեալ Բագրատունեաց գործ. Բագրատանից ներքեւ այդիների մէջ երկու եկեղեցիք կան կիսաւեր, մէկը համարվում է Բագրատունեաց հանգստարան:

Նայելով Բագարանի անուան, հեթանոսական պաշտամանց տեղի է եղել. ուրեմն իւր գոյութեամբ մեր հեթանոսական ժամանակին պատկանող, ծողովուրդը թէև քաջ, բայց ծոյլ է և ինչպէս առհասարակ վանքերի կամ ուխտատեղիների մօտիկ ժողովուրդն է, յոյները դրել են ուխտաւորներից ստացուելիք արդիւնքի կամ շահի վերայ: Առաջ միայն արդեգործութեամբ էին պարապում, բայց այժմ Ռուսաց տիրապետութեամբ երկիրը խաղաղելուց յետոյ դուրս գալով իրանց ձորերից՝ սկսել են երկրագործութեամբ էլ պարապել: Մեզ շատ գժուարին եղաւ համոզել ժողովրդին որ գիւղին մօտ յատուկ եկեղեցի ունենան, ու ազատուին այն ահագին և անտանելի դժուարութիւնից որ կրում են Ս. Դէորդ գնալով, որ կէս վերստից աւելի հեռի է և գժուարակուս սարի վերայ է: ծողովուրդը արտաքուատ ջերմեւանդութիւնն է կեղծում, բայց ներքուատ աչքի առաջ ունենալով այն շահը, որ ունի ուխտաւորներից՝ չէ կամենում ձեռք վեր առնել այդ փոքրիկ մատուից, որ բացի գժուարագնաց լինելը իւր փարութեամբ անկարող է բովանդակել յիսունից աւելի մարդ: Ի վաղուց անտի դպրոցական շէնք ունին գիւղից գարձեալ բաւական հեռի, բայց դպրոց չունին:

զա մեջ է միացած ուղարկելու արդյունքում մեջ ան պատճեն  
ու 2 մարտական բարձ ուղարկութեան այս համարի չ բաժնեան  
ու ուղարձ չ պահպան ուղարկութեան և անձարք առաջ արդե  
պատճեն չ պահպան ուղարկութեան և անձարք առաջ արդե

ԺԷ-

Կուշտան.

Կաղզուանը թէ հնումն և թէ նորումն մի աւան էր և է, և գտնվում է Երասխի ձախ տիկին մի ժամ կամ մօտ վեց վերստ հեռաւորութեամբ և այս ամբողջ տարածութիւնը բռնում են Կաղզուանի այգիքը: Կաղզուանը հնումն Երասխաճորի և այժմ Համանուն գաւառի կեդրոնն է: բնակիչներից մեծագոյն մասը տաճիկ են, իսկ փոքրագոյն մասը՝ մօտ 250 տղւն բնիկ և 100 տանից էլ աւելի եկաւոր հայք են: Նշանաւոր հնութիւններ չունի: Կաղզուանի աղահանքը որ տւանից հիւսիս արեւմուռք է գտնվում թէպէտ չէ կարող մրցել Կողբին հետ, բայց նորանից էլ շատ պակաս չէ: Փողովրդեց բնիկները հայ թէ թուրք պարապում են մեծ մասամբ այգեգործութեամբ, որով հայթայթում են իրանց տարեկան պաշարը արտահանելով շրջակայ գաւառները և յատկապէս կարս: Որովհետեւ կանոնաւոր ճանապարհներ չըկան, տեղափոխութեան միակ միջոցն են էշերը, որ շատ բազմաթիւ են Կաղզուանում, և Կաղզուանցիք չըկամինալով էլ բառը գործածել, որ իրանց կարծիքով անվայել է լսելիքի, Գոլուկ հն կոչում:

Բնիկներից արհեստով և վաճառականութեամբ էլ պարապուներ կան, բայց սակաւաթիւ են: Վաճառականութեամբ և կապալով (աղահանքի և տեղական գնտի պաշարը հայթհայթելու) պարապում են եկաւորները, որոնք Ալէքսանդրօվից են առաւելապէս:

Կաղզուանցի հայք ունին մի տղայոց և մի աղջկանց հոգեսր ծխական միղասեան դպրոց: Դպրոցական շնչքերը անմիշիթար և գպրոցների եկամուտները անգոհայցուցիչ և յուսահատական են: Փողովրդը տաճկաց բռնութիւնից յետոյ նոր աչք բանալով միանգամայն կարիք է զգացել դպրոցների և նոր եկեղեցու շինութեան: Երկուքն էլ մեծ ծախքեր են պահանջում և այդ ծախքը հոգալն դժուարին է: Կաղզուանը իւր այգիներով բարձրա-

ւանդակի վերայ լինելով գեղեցիկ տեսարան է ընծայում մարդու:

## ԺԼ.

Վարդակական:

Կաղզուանից մի և կէս ժամոււ ճանապարհ հեռաւորութեամբ դէպի արեմուտք մի ափափայ բարձրաւանդակի վերայ գտնվում է Ղարավանք հայաբնակ գիւղը: Այս գիւղի մէջ կից միմիանց ի հնուց շինուած եկեղեցիներ կան, որոնք է որ բոլորովին կործանուած են, և որ քայ քայուած մութ, մռայլ և խոնաւ լինելուն համար անյարմար ժամերգութեան, այս իսկպատճառով ժողովուրդը նոր եկեղեցի է շինել, որ մնում էր միայն ծածկել: Հին եկեղեցիք որովհետեւ սև քարից են շինուած եղել, այս պատճառով էլ Ղարավանք են կոչուել գիւղի հետ միասին: Հին եկեղեցիք Ժ. - րդ դարուց ուշ չեն շինուած: Ղարավանքից դէպի հիւսիս ակնապարար լայն ձորի միջով հոսում է Մայր Արաքսը, որի ձախ ափին քարաժայռի վերայ գտնվում է Զանկիմիի բարձրադիտակ վահճը:

## ԺԹ.

Վարդէ հեր:

Ափափայ բայց կանաչուտ ծործորներից անցնելով դէպի հարաւ Ղարավանքից երեք ժամու հեռաւորութեամբ բարձրաբերձ լեռների միջև մի գոգաւոր հովտում գտնվում է Ղարդիհէր ուխտատեղին, որ Տաճկաց սահմանակից է: Հովիտը իւր վատկներով դէպի հիւսիս, դէպի Երասխ, ձգուելով կազմում է նախնեաց Վիշապաձորը: Վարդի հէրի հովիտը և Վիշապաձորի վերի մասերը լեռների և բլրակների ծմակները անտառուտ են:

ԻՄ Հանդիպելը Վարդիհերում պատահեց յունիսի 1-ին և

այդ ժամանակ դեռ ձիւնը բոլորովին վերջացած չէր. սարսափելի ցուրտ, խոնաւ և անձրւաբեր գիշեր անցրինք: Վարդի հէրի եկեղեցին այժմ շինուած է օրօրօցաձեւ մի փոքրիկ, դալարաւէտ դարի վերայ, բայց հին եկեղեցին և միաբանից բնակարանները գտնվում են դէպի արևելք, որոց միայն հիմքերն են յայտնի: Վարդիհէրն իւր ամբողջ սրբավայրերով նուիրեալ է Թաթլոյ և Վարոսի: Նայելով Կարսայ և Ալէքսանդրօպովի ժողովրդոց անուններին, որոնց մէջ բաւական շատ Թաթուլ և Վարոս կան, (ժողովուրդը Թաթոս Վարոս է կոչում) յայտնի կարելի է ենթագրել թէ որքան ջերմեռանդ են դէպի այս ուխտատեղին: Այժմեան և հին մատուռից դէպի արևելք մի ժայռի կողքին բացուած անձաւը, որի մէջ ջուր ևս կայ՝ կոչվում է չարչարանք և համարվում է Թաթլոյ և Վարոսի ճգնարանը. ջերմեռանդն ուխտաւորները բոկոտն մագլցելով բարձրանում էին դէպի անձաւը իրանց ուխտը անելու չարչարանաց տեղում: Տեսնելով տանջանքը որ կրում էին բարձրացողները և աչքի առաջ ունենալով երկիւզ, որ կարող է մի փոքրիկ անզգութիւն առաջ բերել սոյցի աքելով և վայր գլորուելով, և մանաւանդ մի կնոջ տագնապը, որ կամենում էր բարձրանալ և կէս ճանապարհին դէմ էր առել ու չէր կարողանում առաջ գնալ, առաջարկեցի սանդուղներ շինել կամ փորել նոյն իսկ ապաւաժի լանջքին մինչեւ անձաւը, որպէս զի դիւրութիւն լինի երթևեկութեան համար. բայց իմ այս առաջարկութիւնը ուխտաւորների կողմից տհաճութեան արժանացաւ: Որովհետեւ նոքա իրանց ուխտագրութեան լիակատար բաւականութիւնը համարում էին դժուարութիւնը, որ նոքա կրում են վեր, դէպի անձաւը բարձրացողները վայր են սայթաքել և ոչ ինչ վնաս չեն տեսել:

Վարդիհէրից դէպի հարաւ արևելք գտնվում է երկճեղք մի լեառն չորս վերստ հեռաւորութեամբ մինչեւ կատարը, այս լեառն կոչվում է Ս. Մամասայ սար. ուխտաւորներից շատերը շտապում են և այդ տեղ իրանց ուխտը կատարելու. ուր

բարձրանալ կարելի է դարձեալ հետի և բոկոտն.

Վարդիհէրն ունի երեք ուխտ. Վարդավալառ, Ս. Աստուածածին և Վարագայ Խաչ. այդ ուխտերին բաւական ժողովուրդ է խռանվում Վարդիհէրում Կաղզուանի շրջակայքից և Ալաշկերտից: Որովհետև վանահայր յըկայ, հետեւաբար և արդիւնքն էլ աննշան է լինում: Համբարձմանն էլ միայն Կաղզուանցիք են, գնում Վարդիհէր աւելի էլք անելու և անտառից ձրիաբար մի քանի իշաբեռ փայտ բերելու քան ուխտ անելու. ես ևս 1888 թուի Համբարձմանն գտնուեցի Վարդիհէրում:

Ուխտերից գոյացած արդիւնքը լաւ հսկողութեամբ մօտ 200 րուբ. կարող է լինել, բայց լաւ հսկողութիւն որուեղից և ում ձեռքով ունենալ սովորաբար 120 րուբլուց աւելի չէ լինում։ Վաճառքին կամ ուխտատեղուն յատկացրած է 1250 դեսիատին հող, որ միայն արօտատեղի կարող է լինել. և անտառից կարելի է օգտուիլ, եթէ ճանապարհներ լինեն։ Այդ հողն յանձնուեց հոգեւոր իշխանութեան անցեալ 1888 թուի յուլիս ամսին։ Առ այժմ ոչինչ օգտուած չէ բերում հողը։

Աշա Կարսի լիճակի իմ տեսած և նշանաւոր հնութիւնների մասին համառօտ ամփոփումն որ կազմելիս, մեծապէս օգտուել եմ. Հ. Ալիշանի Նիրակից և առաւելապէս Հ. Ներսէս Սարգսեանի տեղագրութիւնից, որ տւելի հաւատարիմ է. վասըն զի անձամբ տեսել, քննել և ուսումնասիրել է. մինչդեռ Հ. Ալիշան ուրիշներից քաղելով առանց տեղումը տեսած լինելու, տեղ տեղ բաւական խոշոր ոխաներ է. անում, որ հարկ ըստ համարեցի մատուցնիշ լինել, որովհետև նպատակս չէր նոր տեղագրութիւն կազմել կամ վերստուգել, այլ եղածներից տեղեկութիւնները ամփափել:

Այսքան վիճակիս Հնութեանց մասին խօսելուց յետոյ մի համառօտ տեղեկութիւն էլ արդի գրութեան մասին մի յար-մար դէպքում:

6. U. S.